

Ս. Ժողովոյ քարտուղարն ասոր կը պատասխանէ 23 Յնր. 1773 նամակաւ, թէ այժմ չուով շատ հայ եպիսկոպոսներ կան եւ Հայոց Տունը Ս. Մարիամ Եգիպտացի տեղ չկայ, թէ Ս. Ժողովոյ արկղը շատ ծանրաբեռնեալ է, եւ թէ Արեւելք ուղղափառ Ժողովուրդն Եպիսկոպոսի պէտք ունի, եւ Սարգսի հոն գտնուիլը շատ արդիւնաւոր կ'ըլլար. ի վերջոյ կը գովէ անոր բազմարդիւն կեանքը: Ասոր կը պատասխանէ Սարգիս 8 Փետր. 1773 թուակիր նամակաւ, որուն Սարգսի ձեռք գրուած օրինակն է այս.

Ընկալայ զպատուական գիրն Գերապայծառութեանդ զգրեալն ի յունվարի 23 եւ ընթերցեալ զայն յաւէտ ուրախացայ ի սրտի իմում, եւ գիտացի զմտերիմ բարեկամութիւն Գերապայծառութեանդ որ առ իս: Ի պատասխանատրութիւն որոյ ասեմ հեղութեամբ եւ խոնարհութեամբ, թէ գալուտն իմ ի Հոսմ ոչ դիտէր զօգուտն անձին իմոյ ի կողմանէ դրամոյ, եւ այնպէս տալ զձանձրոյթ ինչ արկեղ սրբոյ Ժողովոյդ, այլ ունէր միայն զմասնաւոր նկատումն հարկաւոր իրականութեանց ազգին իմոյ եւ յատկապէս անձին իմոյ: Եւ ելանելով իմ ի Արտանդնուպոլսոյ, ոչ սակաւս թողի անդէն ի յուղղափառ դաւանութեան լուսաւորեալս եւ հաստատեալս նաեւ անձինս մեծամեծս ազգին իմոյ քրտնաջան վարդապետութեամբք եւ վարժեցուցմամբք, զորս գործեցի մինչեւ ի խոր ծերութիւնս իմ յայս պէսպէս հաւածանօք եւ աքսորանօք հանդերձ, զորս միշտ կրեցի եւ կրէի ի ներհակութեւն ախտակիր հակաակորդաց անտի, որք օր ըստ օրէ անհ(եպանան) նաեւ էի ի մեծագոյն վտանգի կրելոյ զառաւելագոյնս քան զորս կրեցի. եւ զի մի այսու վնասիցէին առաւել քան թէ շահաւէտիցէին ուղղափառքն